

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 50

22 ապրիլի, 2020

ՊԱՐԵՏԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 48 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով՝

1. Պարետի՝ 2020 թվականի ապրիլի 21-ի N 48 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի «ա» ենթակետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«Սահմանել Վարդենիս համայնքի վարչական սահման մուտք գործելու և վարչական սահմաններից ելք կատարելու հատուկ ռեժիմ՝ արգելելով անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման և գյուղատնտեսական ու այգեգործական աշխատանքներ իրականացնելու նպատակով անձանց ու «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի՝ Սոթքի ոսկու հանքավայրի, «Էկոկաթ» ընկերության աշխատակիցների և Վարդենիս համայնքից Ակունք համայնքում գտնվող «ԱՐԱՔՍ-2» ԱԿ-ի կաթի մթերման կետ կաթ մթերողների տեղաշարժի, Մ11 միջպետական ճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության.»:

2) Որոշման 1-ին կետը լրացնել «դ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետի «ա» ենթակետով սահմանված գյուղատնտեսական և այգեգործական աշխատանքներ իրականացնելու և Վարդենիս համայնքից Ակունք համայնքում գտնվող «ԱՐԱՔՍ-2» ԱԿ-ի կաթի մթերման կետ կաթի մթերման նպատակով անձանց ելքն ու մուտքը թույլատրել միայն Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցչի կողմից ստորագրված՝ սույն որոշման հավելվածով սահմանված ձևանմուշի առկայության դեպքում.»:

3) Որոշման 1-ին կետը լրացնել «ե» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետի «ա» ենթակետով սահմանված՝ «Էկոկաթ» ընկերության և «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի՝ Սոթքի ոսկու հանքավայրի աշխատակիցների ելքն ու մուտքը թույլատրել միայն Պարետի՝ 2020 թվականի մարտի 31-ի N 27 որոշմամբ սահմանված գործատուի տեղեկանքի առկայության դեպքում.»:


4) Որոշման 1-ին կետը լրացնել «զ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.


«Սույն կետի «ա» ենթակետով սահմանված՝ Մ11 միջպետական ճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության վերահսկման նպատակով ՀՀ ոստիկանության կողմից Վարդենիս համայնքի ներսում սահմանել վերակարգեր և

բացառել երթևեկող տրանսպորտային միջոցների կանգ առնելը Վարդենիս համայնքի վարչական սահմաններում.»:

5) Որոշման մեջ ավելացնել հավելված՝ համաձայն հավելվածի.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 22/04/20 13:30:54 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Պարետի՝ 2020 թվականի ապրիլի 22-ի N 50 որոշման

«Հավելված
Պարետի՝ 2020 թվականի ապրիլի 21-ի N 48 որոշման»

Ձևանմուշ
Պարետի՝ 2020 թվականի ապրիլի 18-ի N 45 որոշման

Գեղարքունիքի մարզպետարանի կողմից տրամադրված տեղեկանք

Տրված՝ « » ապրիլի, 2020 թ.

Անձի անուն, ազգանուն _____

Անձը հաստատող փաստաթղթի համար _____

Այգեգործական կամ գյուղատնտեսական նշանակության հողակտորի հասցեն

Այցելությունների օրեր և ժամեր _____

Տեղեկանքի գործողության ժամկետը (օր) _____

Մարզպետարանի ներկայացուցչի անուն, ազգանուն _____

Մարզպետարանի ներկայացուցչի ստորագրություն՝ _____